# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝Կոտայքի մարզի «Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոց»-ի , «Հասարակագիտություն»(շաբաթական 5 ժամ,), «Տեխնոլոգիա»( աղջիկների խումբ՝ 4 ժամ, տղաների խումբ ՝շաբաթական 3 ժամ) , առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ՝ ըստ դասաբաշխման :

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի : Գրավոր փուլի համար նախարարության կողմից մշակված հարցաշարի համաձայն
/ կազմված 200 հարցից/՝ պատահական ընտրությամբ կազմված 50 հարցից բաղկացած թեստ,հառցազրույցի փուլի համար նախատեսված հարցաշարը կազմում է հաստատությունը .մեկ հարցատոմսը կազմված է 5 հարցից/իրավիճակային և ուղղված են մասնակիցների մանկավարժական և ուսումնամեթոդական գիտելիքների կարողությունների և հմտությունների բացահայտմանը :

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է ( Ձև 1),
2. Բարձրագույն կրթության ( բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթության , սպայական կոչման մասին հավաստող փաստաթուղթ ( դիպլոմ, զինվորական գրքույկ) կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն ( Ձև 4),
5. Մեկ լուսանկար՝3×4 չափի,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ
10. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ շխատանքային գրքույկի պատճենը՝առկայության դեպքում

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ :

Փաստաթղթերն ընդունվում են հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից :

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 20-ին՝ ժամը 13:00-ին ՝ Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոցում հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ,Նաիրիի տարածաշրջան,գ. Թեղենիք,1-ին փողոց, 20

Տեղեկությունների համար զանգահարել ՝

( 0224) 6-13-84, ( 098) 10-63-06 հեռախոսահամարներով :

Թեղենիքի միջնակարգ դպրոցի տնօրինություն